ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

14.09.12 № 1.1/1.5-1/12010-12

Ձեր №

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-ի
ԻՐԱՎԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված Ձեր 04.09.2012թ. թիվ 180-ի 9 հարցման (մտից՝ 10.09.2012թ. առցանց համար 4E73-F540-BF06)՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար ապրանքներ մատակարարելու նպատակով 2012 թվականի ընթացքում ապրանքների մատակարարման պայմանագիր է կնքվել <<Ալեքս Գրիգ>> ՍՊԸ-ի հետ: Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի շրջանակներում՝ բանակցային ընթացակարգ առանց հայտարարության գնման ընթացակարգով, որի շրջանակներում հարցում է կատարվում համապատասխան ծառայություններ մատուցող երեք կամ ավելի կազմակերպությունների, որի արդյունքում պայմանագիր է կնքվում առավել ցածր գնով ծառայություն մատուցող կազմակերպության հետ:

2012թ.-ի բյուջեով ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական հանդիպումների համար <<Ներկայացուցչական ծախսեր>> հոդվածով նախատեսվել է 1200.0 հազար դրամ: 2012թ.-ի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 10-ը <<Ներկայացուցչական ծախսեր>> հոդվածով բյուջեով նախատեսված գումարներից ծախսվել է 243.4 հազար դրամ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ